ԱՐՏԱՇԵՍ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ*

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

ash.haaam@gmail.com

ՈՒՏԻ ԳԱՎԱՌԸ

Բանալի բառեր՝ վարչական միավոր, Տավուշ, Ձորոփոր, Գարդման, ապստամբություն, Բագրատունյաց Հայաստան, Ուտի գավառ:

Ներածություն

Հովհաննես Դրասխանակերտցին իր «Պատմութիւն Հայոց»-ում քանիցս օգտագործել է ինչպես «Աշխարհացոյց»-ում, այնպես էլ իրեն նախորդած հեղինակների երկերում չհանդիպող «Ուտի գաւառ» անվանումը: Նա առաջին անգամ այն կիրառել է Հյուսիսային Հայաստանում արաբական զորավար Բուղայի 852–855 թթ. պատժիչ գործողությունները նկարագրելիս:

Կաթողիկոս-պատմիչի համաձայն, Բուղան Գարդման գավառի նույնանուն բերդում տեղի իշխան Կտրիճին բռնելուց հետո «անտի ևս չուեալ յՈւտի գաւառ՝ ձերբակալ ի Տուս գիւղ առնէ զՍտեփաննոս, որում և Կոն անուանէին զնա. որ ի նախնւոյ իւրմէ Սևկոյ՝ Սևորդիք ազգքն անուանէին»[1]: Այս իրողությունն աննշան տարբերություններով ներկայացրել են նաև, անկասկած, հիմնականում նրանից օգտված Ասողիկն ու Վարդան վարդապետը: Նրանցից առաջինը Ստեփանոս Կոնին «զիշխանն Սեւորդեաց»[2] է կոչել, իսկ երկրորդը գրել է, որ Բուղան Գարդմանից «յՈւտի երթեալ՝ ըմբռնէ զՍտեփանոս Կոնն, որ ի նախնոյն իւրմէ Սևկոյ՝ Սևորդիք ազգն անուանին»[3]: Վարդան վարդապետի երկերից և ոչ մեկում այդ տեղանվան այլևս չհանդիպելը ևս վկայում է այն Հովհաննես Դրասխանակերտցուց քաղված լինելու մասին:

---

* *Հոդվածը ներկայացվել է 05.06.20, գրախոսվել է 08.06.20, ընդունվել է տպագրության 14.08.20:*

[1] Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ, 1912, էջ 127: Պատմիչն Ուտի գավառ անվանումը մեկական անգամ փոխարինել է մարզ և նահանգ, իսկ երկու անգամ՝ աշխարհ բառերով (տե՛ս **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ** 1912, 320, 321):

[2] **Ստեփանոս Տարաւնեցի** 2011, 708:

[3] **Վարդանայ վարդապետի** 1862, 81:

Ուտի գավառի պատմության շուրջ

Ուտի գավառի տեղագրությամբ հատուկ կամ հպանցիկ զբաղվել են որոշ հետազոտողներ: Նրանցից Ռ. Մաթևոսյանն իրավացիորեն գտել է, որ Հովհաննես Դրասխանակերտցու կողմից օգտագործված Ուտի գավառ հասկացության մեջ գավառ բառը «գործածված է ոչ իր սովորական՝ ֆիզիկաաշխարհագրական շրջանի իմաստով, այլ որպես վարչական միավորի անվանում»[4]: Ինչ վերաբերում է Ուտի գավառի տեղագրությանը, ապա քանիցս անդրադառնալով այդ հարցին, այդ հետազոտողն իրարամերժ կարծիքներ է հայտնել: Նա մեկ կարծել է, որ այն ընդգրկել է պատմիչների կողմից նաև Ձորագետ անվանված Աղստևի հովիտը[5], մեկ այդ գետի միջին հոսանքն ու դրան հարևանցող Տավուշի ձորը[6], մեկ Աղստևի միջին հոսանքը[7], մեկ էլ պնդել, որ Ուտի գավառ վարչական միավորի կազմում էին Գուգարքի Ձորոփոր գավառը՝ Կայանով և հարևան Ուտիքի Տավուշ գավառը համանուն բերդով[8]: Ուտի գավառին հպանցիկ անդրադարձած Ա. Եղիազարյանն այն նույնացրել է Ուտիքի[9], իսկ Ա. Հակոբյանը՝ Տավուշ-Ձորագետի հետ[10]:

Ուտի գավառի տեղորոշմանն ու սահմանների ճշտմանը նպաստում են հատկապես Հովհաննես Դրասխանակերտցու և Վարդան վարդապետի հաղորդումները: Նրանցից առաջինը նախ փաստում է Բուղայի՝ Գարդմանից այնտեղ մտնելը, ինչը ենթադրում է դրանց սահմանակցությունը: Ապա հետագայում նկարագրելով Գարդմանի իշխան Սահակ Սևադայի՝ Աշոտ Բ-ի (914–928) աներոջ Ուտի գավառ ներխուժելը, հայտնում է, որ նա գրավում է Ձորոփոր գավառում գտնվող Կայան բերդն ու դրա մերձակա ամրոցը և ամրանում Տավշո ձորի արևմտակողմում գտնվող մի լեռան ծործորներում[11]:

Վարդան վարդապետն իր հերթին Սևորդիների գավառ է համարում Տավուշը, որտեղ, իրոք, գտնվում էր Տուս գյուղը: Բանն այն է, որ Տավուշն ըստ «Աշխարհացոյց»-ի, Գարդմանին արևմուտքից կից Տուչկատակ (Տուս-Քուս-

---

[4] **Մաթևոսյան** 1982, էջ 52:
[5] Տե՛ս **Մաթևոսյան** 1982, 52: **Մաթևոսյան** 1990, 41:
[6] Տե՛ս **Մաթևոսյան** 1982, 52:
[7] Տե՛ս **Մաթևոսյան** 1990, 81:
[8] Տե՛ս **Մաթևոսյան** 1982, 54:
[9] Տե՛ս **Եղիազարյան** 2011, 391: **Եղիազարյան** 2016, 75, **Եղիազարյան** 2017, 11, 13:
[10] **Յակոբեան Ալեքսան** 2010, 221:
[11] Տե՛ս **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ** 1912, 309–311:

տակ) գավառն է[12], որը Տուս արմատի աստիճանական հնչյունափոխությամբ պայմանավորված՝ X դ. սկսած աղբյուրներում հիշատակվել է Տավուշ ձևով:

Վերոգրյալի հաշվառմամբ պետք է ընդունել, որ Գարդմանից Ուտի ներխուժած Սահակ Սևադան Աղստևի ձախ վտակ Ոսկեպարի ավազանը ներառող Ձորոփոր կարող էր հասնել միայն Տավուշով և դրան արևմուտքից սահմանակից ու Աղստևի ամբողջ միջին հոսանքի շրջանն ու ստորինի միայն աջափնյակը զբաղեցնող Աղուէ գավառով: Ուստի վստահ պնդելի է, որ Ուտի գավառ վարչական միավորն ամփոփվել է Գուգարքի Ձորոփոր և Ուտիքի Աղուէ ու Տավուշ գավառներում[13]:

Բագրատունյաց Հայաստանի արքունապատկան վարչական միավոր հանդիսացող Ուտի գավառի հիմքերը դրվեցին Աշոտ Ա-ի (885–890) օրոք: Հովհաննես Դրասխանակերտցին պատմելով հայկական տարածքները վերականգնված հայոց պետության մեջ ներառելու և դրանցում կենտրոնական իշխանության դիրքերն ամրապնդելու ուղղությամբ Հայոց արքայի կատարած նպատակասլաց քայլերի մասին, նաև նկատել է, որ նա «զաղխատրոյզ բնակիչսն Գուգարաց և զելուզակուտ մարդիկ Ուտի գաւառի առհասարակ ընդ ձեռամբ նուաճէր՝ ի բաց ի նոցանէ հերքելով զաւազակութիւն մարդադաւութեան, և իբրև օրինաւորս և հլուս զամենեսեան կազմէր, և առաջնորդս և իշխանս նոցա կացուցանէր»[14]:

Բնականաբար, պատմիչն ինչպես Բուղայի գործողությունները նկարագրելիս, այնպես էլ այս դեպքում Ուտի գավառ անվանումն օգտագործում է հետին թվով՝ արտացոլելով այդ վարչական միավորի գոյության իր ժամանակի իրողությունը: Հայոց արքայի կողմից Գուգարքի և Ուտիի բնակիչներին օրինավոր ու հնազանդ դարձնելը և նրանց համար առաջնորդներ ու իշխաններ կարգելը ենթադրում է, որ ռազմավարական առումով խիստ կարևոր այդ տարածքներն արքունապատկան էին դարձվել: Հոր մահվան ժամանակ թագաժառանգ Սմբատի «ի կողմանս Գուգարաց ի նուաճել զազգսն այնոցիկ գնացեալ»[15], լինելուց էլ կարելի է կարծել, որ Աշոտ Ա-ն ոչ միայն Գուգարքի, այլև Ուտիի հպատակեցումն առաջացած տարիքի պատճառով նրան էր հանձնարարել:

---

[12] Տե՛ս **Հարությունյան** 2007, 32 և կից քարտեզը:

[13] Այդ գավառների տեղադրության մասին տե՛ս **Հարությունյան** 2007, 32 և կից քարտեզը: **Գևորգյան** 2013, 134–136:

[14] **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ** 1912, 140:

[15] **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ** 1912, 143:

Ըստ Հովհաննես Դրասխանակերտցու, Սմբատ Ա-ն (890–914) գահակալելուց անմիջապես հետո ձեռնամուխ է լինում իր պետության սահմանների ընդլայնմանը և նախքան Դվինի 893 թ. երկրաշարժն ի թիվս այլ տարածքների, դրանց մեջ ներառում «և զՈւտի գաւառ մինչև ի քաղաքն Հունարակերտ և մինչև Տուս և ի Շամքոր»[16]: Քանի որ ըստ նույն պատմիչի, Ուտի գավառը դրանից քիչ առաջ էր հպատակեցվել, մնում է ենթադրել, որ Սմբատը կրկին այնտեղ էր արշավել տեղի «ելուզակուտ» բնակչությանը լիովին հնազանդեցնելու համար:

Չնայած կաթողիկոս-պատմիչի համաձայն, Սմբատ Ա-ն գրավել էր ոչ միայն Հունարակերտից Տուս, այլև այդտեղից մինչև Գարդմանում գտնվող Շամքոր քաղաք ընկած տարածքը, վերջին պնդմանը պետք է որոշ վերապահությամբ մոտենալ: Բանն այն է, որ Գարդմանն այդ ժամանակ ինքնուրույն իշխանություն էր և պատկանում էր Սահակ Սևադա հզոր իշխանին: Կարելի է ենթադրել, որ Հովհաննես Դրասխանակերտցին նկատի է ունեցել Սմբատ Ա-ի կողմից ոչ թե Տուսից Շամքոր ընկած տարածքը ևս արքունապատկան դարձնելը, այլ իրեն ենթարկելը: Այդ է փաստում մի Անանուն ժամանակագրի վկայությունն առ այն, որ երբ Սմբատ Ա-ի որդի Աշոտ Բ-ն հաջորդեց հորը՝ «իշխէին Բագրատունիք... և մինչ ի Ձորոցգետն և մինչ ի Գարդման»[17]:

Նույնն է հաղորդում նաև Ստեփանոս Օրբելյանը, երբ անդրադառնում է Սյունյաց թագավորության ստեղծման շարժառիթներին. «Բագրատունիքն իշխէին... և մինչ ի Ձորոյ գետն և մինչ ի Գարդման. և Սիւնիք կտրեալ էր ի նոցանէ»[18]: Սակայն ի հակադրություն վերոգրյալի, Մովսես Կաղանկատվացու պնդմամբ Սահակ Սևադան «առհասարակ տիրեաց Գարդմանայ և Քաւսայ և Փառնայ (Քուստի Փառնէս – ***Ա.Շ.***) գաւառաց, այլ և աւազակապետաց Ձորոյգետոյն բովանդակ եղև իշխան... ընդ որում և բազմաջան հնարիւք թագաւորն Հայոց Սմբատ մարտուցեալ ոչ ինչ կարաց ստերիւրել զնա ի կամս իւր»[19]:

Աղվանից պատմիչի այդ հաղորդումը Բ. Ուլուբաբյանն առանց համապատասխան քննության անվերապահ ընդունել է և Ձորագետը ներառել Սահակ Սևադայի իշխանության մեջ[20]: Ռ. Մաթևոսյանն էլ կարծել է, թե Ուտիի վերակացու Մովսեսի խռովության ճնշումից հետո Աշոտ Բ-ն ըստ երևույթին այդ

---

[16] **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ** 1912, 161:

[17] Մանր ժամանակագրություններ, XII–XVIII դդ., հ. I, 1951, 384:

[18] **Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի** 1910, 300:

[19] **Մովսէս Կաղանկատուացի** 1983, 341:

[20] Տե՛ս **Ուլուբաբյան** 1975, 82, 90:

գավառի վարչությունը «հանձնել էր իր աներ Սահակ Սևադային, բայց միայն «Ուտի գավառի» մի շրջանում (Տավուշի կիրճ), իսկ Ձորոփորը ենթարկել իրեն»[21]: Այս ենթադրությունն անընդունելի է թեկուզ այն պատճառով, որ ըստ Մովսես Կաղանկատվացու, Ձորոփորը ենթարկվել է ոչ թե Աշոտ Բ-ին, այլ Սահակ Սևադային և որ վերջինս «աւազակապետաց Ձորոյգետոյն բովանդակ եղև իշխան», ոչ թե Աշոտ Բ-ի, այլ՝ նրա հայր Սմբատ Ա-ի օրոք:

Իր հերթին Ա. Եղիազարյանը, գտնելով, որ Սահակ Սևադայի իշխանությունը տարածվում էր «Շամքոր գետից մինչ Աղստև և Սևանի լեռնաշղթայից մինչև Կուր գետ»[22], քննվող հաղորդումից դատելով ենթադրել է, որ «նա իր իշխանությունը ընդարձակել էր ընդհուպ մինչև Ձորագետ՝ տիրելով, ամենայն հավանականությամբ Աղստև և Ձորագետ (ըստ նրա Դեբեդ – **Ա.Շ.**) գետերի ստորին հոսանքների և Կուր գետի միջև տարածվող դաշտին»[23]: Ըստ հետազոտողի, դա կատարվել է նախքան 905–906 թթ.[24] և Սմբատ Ա-ն նույնիսկ զենքի ուժով չի կարողացել այդ գավառները հետ գրավել[25]: Համապատասխան աղբյուրագիտական հենքի բացակայության պատճառով այս պնդումների ու ենթադրությունների հետ համերաշխվել հնարավոր չէ:

Մովսես Կաղանկատվացու այս վիճահարույց հաղորդումն ամենայն հավանականությամբ Սահակ Սևադայի ու նրան հնազանդ պահելուն ձգտող Սմբատ Ա-ի սուր առճակատման աղավաղված և այդ պատճառով այլ աղբյուրներում չարտացոլված արձագանքն է:

Բագրատունյաց թագավորության ամրապնդումն ու վերելքը հարուցում էին Ատրպատականի Սաջյան ամիրության անհանգստությունը: Դրանով պայմանավորված՝ նրա ամիր Աֆշինը քանիցս արշավեց Հայաստան: Դրանցից մեկը տեղի ունեցավ 899/900 թ.: Աֆշինի հետապնդած նպատակներին քաջատեղյակ Հովհաննես Դրասխանակերտցու համաձայն, նա հորդահոս ջրի նման «չուեալ ընդ Ուտի գաւառ՝ գայ ի կողմանս Գուգարաց և Վրաց, զի նախ զնոսա նուաճեսցէ կամ զշփոթ ամբոխի ի մէջ արկցէ. զի մի յաջողեսցի ուրեք երբէք փախուստ ի նմանէ Սմբատայ»[26]: Սակայն Աֆշինին չհաջողվեց իր նպատակին հասնել: Ուտիի ու Գուգարքի վերնախավը, պատմիչի խոսքե-

[21] **Մաթևոսյան** 1982, 55:
[22] **Եղիազարյան** 2011, 163:
[23] **Եղիազարյան** 2011, 163:
[24] Տե՛ս **Եղիազարյան** 2011, 127:
[25] Տե՛ս **Եղիազարյան** 2011, 127:
[26] **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ** 1912, 178:

րով՝ «նախարարք կողմանցն այնոցիկ»[27] ոչ թե Սմբատ Ա-ի դեմ ապստամբելով միացան նրան, այլ համառ դիմադրությամբ հարկադրեցին ձեռնունայն հեռանալ Վանանդ[28]:

Ի վերջո, Աֆշինը Դվինում թողնելով իր որդի Դադադին ու ոմն մեծ ներքինապետի, հեռացավ Ատրպատական: Վերջինս, ըստ Հովհաննես Դրասխանակերտցու, Դվինից Փայտակարան վերադառնալիս «ի բանից բանսարկութեանց ոմանց»[29] դրդված՝ անկասկած Տավուշում, հանկարծակի հարձակմամբ գերեց Սևորդյաց նահապետ Գևորգին ու նրա եղբայր Արուեսին և տարավ Փայտակարան: Այնտեղ նրանցից պահանջում են կրոնափոխվել, բայց մերժվելով՝ սրի են քաշում[30]:

Այս իրադարձությանն անդրադարձել է նաև Մովսես Կաղանկատվացին: Սակայն ըստ նրա, երբ ներքինին «արշաւեալ ի Վիրս՝ ընդդէմ ելեալ նմա երկու քաջ զօրավարք Վրաց՝ Գէորգ իշխան և Արևէս եղբայր նորին. և երկոքին չարաչար մեռանէին ի նմանէ»[31]: Պնդելի է, որ իրապատում է այս իրադարձության ժամանակակից կաթողիկոս-պատմիչը: Ընդ որում, որքան էլ զարմանալի է, փաստ է, որ Աղվանից պատմիչը Սևորդիներին չգիտի, իսկ եթե գիտի էլ, ոչ մի անգամ չի հիշատակում:

Աֆշինի մահվանից հետո նրան փոխարինած եղբայրը՝ Յուսուֆը, ավելի ուժգին շարունակեց Բագրատունյաց թագավորության նկատմամբ թշնամական քաղաքականությունը: Նա 903 թ. արշավելով Հայաստան՝ Փայտակարանից Ուտիով հասավ Տաշրատափ, այսինքն Տաշիր[32]: Ատրպատականի ամիրը հաջորդ անգամ Հայաստան ներխուժեց 909 թ. ապրիլին, նպատակ ունենալով այն ավերել ու ենթարկել իրեն: Կողմերի միջև ճակատամարտը տեղի ունեցավ 910 թ. գարնանը՝ Նիգ գավառի Ձկնավաճառ կոչվող վայրում: Թագաժառանգ Աշոտի և նրա եղբայր Մուշեղի գլխավորած հայոց բանակի շարքերում էր նաև Ուտի գավառի բնակիչներից հավաքված զորքը: Արքայորդի եղբայրներն «ի մարտ պատրաստեցան, ոչ գիտելով զնենգութիւն զօրաց իւրեանց՝ բնակչաց Ուտի գաւառի, որք են Սևորդիք»[33]: Ճակատամարտի

[27] **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ** 1912, 178:
[28] **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ** 1912, 178:
[29] **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ** 1912, 187:
[30] Տե՛ս **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ** 1912, 187–188:
[31] **Մովսէս Կաղանկատուացի** 1983, 336–337:
[32] **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ** 1912, 195:
[33] **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ** 1912, 218:

վճռական պահին «յանկարծակի ապա զօրքն Ուտէացի ընդ կրունկն դարձեալ ըստ նենգապատիր խորհրդոյն անդառնալի գնային ի կամս անձանց»[34]: Դատելով պատմիչի խոսքերից, ուտեացիներից հավաքված զորքը հայոց բանակի՝ Աշոտի հրամանատարությամբ գործող թևի կազմում էր: Այն մարտադաշտ վերադարձնելու նպատակով Աշոտի գործադրած ջանքերն ապարդյուն անցան[35]: Հայոց բանակը պարտվեց[36], ինչը երկրի համար խիստ բացասական հետևանքներ ունեցավ: Մուշեղն էլ «ըստ նենգ գործելոյ ի բնակչաց Ուտի գաւառի ձերբակալ եղև»[37] և տանջանքների ենթարկվելուց հետո դեղամահ արվեց[38]:

Ուտի գավառի սահմանակցությամբ կար ևս մեկ՝ բերդապահ-վերակացուների կողմից ղեկավարվող արքունապատկան վարչական միավոր: Եթե Հովհաննես Դրասխանակերտցին հայտնում է, որ Գուգարքի Տաշիր ու շրջակա գավառները ներառող և Շամշուլդե բերդը կենտրոն ունեցող[39] այդ միավորի հիմնադիրը Սմբատ Ա-ն է[40], ապա Ուտի գավառի պարագայում լռում է: Նման հանգամանքը, բնականաբար, դժվարացնում է պարզելու, թե այն երբ և ում կողմից է ստեղծվել:

Արդեն տեսանք, որ Աշոտ Ա-ն Գուգարքի խռովարար և Ուտիի ավազակաբարո բնակիչներին հնազանդեցնելով «առաջնորդս և իշխանս նոցա կացուցանէր»: Նաև ռազմավարական առումով կարևոր դիրք ունենալու պատճառով արքունապատկան դարձված այդ երկրամասերում տեղական

---

[34] **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ** 1912, 219:

[35] Տե՛ս **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ** 1912, 219: Բ. Առաքելյանը Հովհաննես Դրասխանակերտցուն վկայակոչելով գրել է, որ ուտեացիները մարտադաշտը լքում են՝ «իրենց հետ տանելով թագաժառանգ Աշոտին» (Հայ ժողովրդի պատմություն 1976, 38): Իրականում պատմիչը նման պնդման հիմք չի տվել:

[36] Տե՛ս **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ** 1912, 219:

[37] **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ** 1912, 225:

[38] Տե՛ս **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ** 1912, 225:

[39] Ըստ Ռ. Մաթևոսյանի, Հովհաննես Դրասխանակերտցին Գնթունի եղբայրների կողմից իբրև «բերդապահս և վերակացուս» տնօրինվող այս վարչական միավորը նահանգ է անվանում, բայց ոչ բառի ուղիղ իմաստով (տե՛ս **Մաթևոսյան** 1982, 52): Այս կարծիքն ընդունելի է, սակայն նույն պատմիչի աշխատության (էջ 244) և Սանահնի «Քեօթուկ»-ի (Մատենադարան, ձեռ. թիվ 3031, թ. 31) վկայակոչմամբ դրա ավելի ճիշտ անվանումը «Տաշիր գավառ» լինելու մասին նրա պնդումը (տե՛ս **Մաթևոսյան** 1982, 52) վիճարկելի է: Պատճառն այն է, որ նրա հղած երկու աղբյուրում էլ Տաշիր գավառ անվանումն օգտագործվել է ոչ թե վարչական, այլ՝ ֆիզիկաաշխարհագրական միավորի իմաստով:

[40] Տե՛ս **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ** 1912, 295:

վերնախավի ներկայացուցիչներից կառավարչական ապարատի ձևավորումը կնպաստեր դրանց ըմբոստ բնակչությանը հնազանդ պահելուն և սահմանների պաշտպանությունն ամրապնդելուն:

Աֆշինի 899/900 թթ. արշավանքի ժամանակ նրա դեմ պայքարը տեղացի նախարարների կողմից ղեկավարվելուց հետևում է, որ մինչև X դ. սկիզբն այդ երկրամասերը նույն կերպ էին տնօրինվում: Դրանցից Սմբատ Ա-ի Շամշուլդե կենտրոնի հիմնադիր լինելը թույլ է տալիս պնդելու, որ այն ստեղծվել է Յուսուֆի 903 և 909 թթ. Հայաստան կատարած արշավանքների միջակայքում, երբ երկրի վիճակը համեմատաբար կայուն էր: Ըստ երևույթին, Ատրապատականի Սաջյան ամիրների կողմից շարունակաբար Տաշիրի վրայով Հայաստանի խորքեր ներխուժելն էր Սմբատ Ա-ին ստիպել այնտեղ ստեղծել իրեն անմիջականորեն ենթակա բերդապահ-վերակացուների կողմից տնօրինվող վարչական միավոր, որպեսզի ամրապնդի այդ երկրամասի պաշտպանունակությունը: Առավել ևս, որ Տաշիրի կողմից Հայոց թագավորությանը սպառնում էր նաև Տփղիսի ամիրությունը: Ճիշտ է, արաբները Տաշիր էին թափանցում Ուտի գավառով, սակայն Տփղիսի ամիրությունը դրա տարածքով Հայաստանին չէր սպառնում, ինչով էլ թերևս բացատրվում է խնդրո առարկա վարչական միավորի՝ նախորդի հետ համաժամանակ չստեղծվելը:

Ձկնավաճառի ճակատամարտից հետո Յուսուֆի հրոսակախմբերը գրավեցին երկրի տարբեր շրջաններ: Երբ Յուսուֆի հրամանով մահապատժի ենթարկված Սմբատ Ա-ին հաջորդած Աշոտ Բ-ը ձեռնամուխ եղավ արաբներից երկրի ազատագրմանը, նա հաջողությամբ մաքրեց ամբողջ Գուգարքը[41]: Դրանից շատ չանցած նրա գլխավորած 200 հոգու կողմից ջախջախված արաբական զորքի Աղստևի ձորերում գտնված լինելուց[42] եզրակացնելի է, որ Ուտի գավառի զբաղեցրած տարածքը ևս գրավված է եղել, ապա ազատագրվել է Աշոտ Բ-ի կողմից:

Ուտի գավառ վարչական միավորն անկասկած ստեղծվեց 915 թ.՝ Կոստանդնուպոլսից Աշոտ Բ-ի վերադառնալուց հետո[43]: Ամենայն հավանականությամբ դա կատարվեց 915–916 թթ. միջակայքում, նախքան Սահակ Սևադայի դստեր հետ Աշոտի ամուսնությունը: Դա հստակ երևում է Հովհաննես Դրասխանակերտցու շարադրած դեպքերի հաջորդականությունից: Այդ վարչական միավորը ստեղծելով՝ Աշոտն առաջին հերթին նպատակ ուներ իր ան-

[41] Տե՛ս **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ** 1912, 244:
[42] Տե՛ս **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ** 1912, 244:
[43] Տե՛ս **Ադոնց** 2012, 200:

միջական ենթակայության տակ գտնվող նշանակովի կառավարչի միջոցով Ուտիի բնակչությանը հնազանդ պահել և Հայոց թագավորության Տաշիրից Գարդման ընկած սահմանի պաշտպանությունն ամրապնդել: Նա ոմն Մովսեսի էր «կացուցեալ... իշխան և հրամանատար ճուաղաբարոյ ազգացն այնոցիկ Ուտի գաւառի»[44]:

Սակայն, առաջին հերթին երկրում ավատատիրական հարաբերությունների խորացման հետևանքով անջատողականության աճով պայմանավորված՝ Հայոց արքայի հույսերը չարդարացան: Շատ չանցած Մովսեսը, ինչպես նախքան այդ Գնթունիները[45], ապստամբեց Աշոտի դեմ: Ապստամբության ուժգնությունը արքային ստիպեց դիմել իր աներ Սահակ Սևադայի օգնությանը[46]: Նրան օգնության է շտապում նաև Կախքի քորեպիսկոպոսը[47]: Մովսեսն իր հերթին «գումարտակ մեծ առնէ յանդուգն և անճոռնի զօրաց»[48], պատրաստվելով վճռական ճակատամարտի: Իր ուժերին վստահ՝ նա անգամ մերժում է պատգամաբերի միջոցով իր գերակայի առաջարկը՝ «գալ ի հնազանդութիւն և կեալ ի խաղաղութեան և ի հանդարտութեան»[49]: Իրադարձությունների հետագա ընթացքը ցույց տվեց, որ Ուտի գավառի «իշխան և հրամանատար»-ը գերագնահատել է իր զինուժի կարողությունները: Երբ Աշոտի ու նրա աներոջ գլխավորած զորքը հարձակման է անցնում, այն խուճապահար փախուստի է դիմում՝ «միայն թողելով զՄովսէսն»[50]: Վերջինս մազապուրծ ճողոպրում է Սյունիքի իշխան Սմբատի մոտ՝ նպատակ ունենալով նրան դարձնել իր աջակիցը: Այս ընթացքում Աշոտ Բ-ը մնալով Ուտիում, տեղի «զխստապարա-

---

[44] **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ** 1912, 301:

[45] Տե՛ս **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ** 1912, 295–297:

[46] Տե՛ս **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ** 1912, 301: Բ. Ուլուբաբյանը պատմիչի «Բայց թագաւորն Աշոտ արքայորդին չուեալ գնայ առ մեծ իշխանն Սահակ աներ իւր. և ապա զկնի իւր զնա համագունդ հանդերձեալ իւրովքն զօրօք երթայ գնայ յՈւտի գաւառ առ ի հնազանդել զբիրտ ապստամբութիւն Մովսիսի, զոր իսկ կացուցեալ էր զնա իշխան և հրամանատար ճուաղաբարոյ ազգացն այնոցիկ Ուտի գաւառի» (**Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ** 1912, 301) վկայության իմաստը թյուրըմբռնելով, ինչպես նաև Ուտի գավառն Ուտիք նահանգի հետ նույնացնելով սխալմամբ կարծել է, թե Մովսեսը Սահակ Սևադայի «ստորադրյալն ու հովանավորյալն էր Ուտիքում» (**Ուլուբաբյան** 1975, 104):

[47] Տե՛ս **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ** 1912, 301–302:

[48] **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ** 1912, 302:

[49] **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ** 1912, 302:

[50] **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ** 1912, 303:

նոց և ավազակուտ» բնակիչներին համոզում է իրեն ենթարկվել[51], ինչը խոսում է այն մասին, որ Մովսեսի ապստամբությունը միայն նրա անջատողական ձգտումների հետևանք չէր:

Սմբատ իշխանից օգնություն չստացած Մովսեսը հանկարծակի հեռանում է Սյունիքից՝ նպատակ ունենալով «երթալ առ մեծ քորեպիսկոպոսն Ծանարաց և բարւոյ խոստմամբ միաբան ընդ իւր զնա կացուցեալ և գրաւաթափ իւրոյ տէրութեանն լինել»[52]: Սակայն Աշոտ Բ-ը նրան կանխում է և հետապնդելով անձամբ գերում ու կուրացնում: Մովսեսի նկատմամբ խիստ տրամադրված Հովհաննես Դրասխանակերտցին թագավորի այս արարքին հետևյալ բացատրություն ու արդարացումն է տալիս. «որ կամաւ կուրութիւն յինքն կրէ՝ ոչ երբէք կարէ նա գալ յառողջութիւն»[53]: Այս ապստամբությունը պետք է որ տեղի ունեցած լինի 917 թ.: Շատ չանցած, երբ արքայորդի Աբասն աներոջ՝ վրաց իշխան Գուրգենի հետ Աշոտի դեմ դավադրություն կազմակերպեց, Աշոտն Ուտին ապահով դարձած համարելով՝ հեռացավ այնտեղ[54]:

Որոշ ժամանակ անց Աշոտի դեմ ընդվզում է Սահակ Սևադան, որի հարաբերությունները փեսայի հետ լարվել էին: Չնայած իշխանների միջնորդությամբ նրանք հաշտվում են, Աշոտ Բ-ի կողմից իրեն դված Գեղարքունիքի իշխան Վասակի ձերբակալվելն ու Կայան բերդում բանտարկվելը չհանդուրժելով՝ Սահակ Սևադան ապստամբում է Հայոց արքայի դեմ: Ավելի քան ութ հազարանոց զորքով ներխուժելով Ուտի գավառ, նա հասնում է Ձորոփոր ու գրավում Կայան բերդը: Սահակ Սևադան այն կողոպտում է, իսկ Վասակ իշխանին ու իբրև գերիներ այնտեղ պահվող ազնվազարմ կանանց ազատ արձակում: Կայանի վրա սեփական պահակներ կարգելով՝ նա գրավում է նաև դրան մերձակա ամրոցը, ամենայն հավանականությամբ Կայծոնը, ու նրա պահապաններին սրի քաշում: Այս ամենով չբավարարվելով՝ տեղի բնակչությանը գաղթեցնում է իր իշխանություն, իսկ արտերը ժամանակից շուտ հնձել տալով՝ հրկիզում[55] «զի մի կռուիցին կալ զետեղեալ ի նմա ոտք թագաւորին բնակութեամբ»[56]: Այս ամենից հետո Աշոտի պատասխան քայլին սպասող Գարդմանի իշխանը, ինչպես արդեն նշվել է, բանակում է Ձորոփորի հարևա-

[51] **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ** 1912, 303:
[52] **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ** 1912, 303:
[53] **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ** 1912, 304:
[54] **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ** 1912, 304:
[55] Տե՛ս **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ** 1912, 309–310:
[56] **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ** 1912, 310:

նությամբ գտնվող Տավշո ձորի արևմտակողմում բարձրացող մի լեռան ծոր-ծորներում՝ նպատակ ունենալով փեսային ծուղակը գցել ու գերել:

Ուտի գավառից եկած գուժկանից աներոջ ապստամբության լուրն առնելուն պես Աշոտ Բ-ը մոտ երեք հարյուր զինվորով շտապում է այնտեղ: Նա մի պատգամաբեր եպիսկոպոսի միջոցով Սահակ Սևադային հավատարմության երդումը խախտելու մեջ մեղադրելով առաջարկում է գրաված երկու ամրոցները հետ տալ ու տեղահանված բնակչությանը վերադարձնել՝ հավելելով, որ «յայնմհետէ եղիցի միատարր խաղաղութիւն ի մէջ մէր՝ որպէս հօր հարազատի և որդւոյ սիրելւոյ»[57]:

Անշուշտ, փեսայի զորքի սակավաթվությանն իրազեկ Սահակ Սևադան պատգամաբերին զայրացած հայտնում է, որ պատասխանը սրով կտա և իր բոլոր ուժերը հավաքելով պատրաստվում է մարտի: Աշոտն իր մոտ մնացած երկու հարյուր զինվորներով արևածագին հարձակման է անցնում և աներոջ մեծաքանակ զորքը ցաքուցրիվ անելով՝ փախուստի մատնում: Սահակ Սևադան և իր որդի Գրիգորը գերվում են: Դրանից հետո Աշոտը գրավում է նրանց պատկանող Գարդման բերդն ու բոլոր տիրույթները, իսկ իրենց՝ երկմտելուց հետո կուրացնում[58]: Ուշագրավ է, որ Հովհաննես Դրասխանակերտցին այս անգամ արդեն թագավորին դատապարտում է[59]: Եվ դա այն դեպքում, երբ Սահակ Սևադան ոչ միայն դրժել էր իր գերակա Աշոտ Բ-ին տված հավատարմության երդումը, այլև արքունապատկան Ուտի գավառում օտար նվաճողին հարիր գործելակերպ էր դրսևորել:

Աշոտ Բ-ի աներոջ ու աներորդու կուրացվելու մասին պատմելուց հետո կաթողիկոս-պատմիչը հայտնում է, որ դրանից մի փոքր առաջ Յուսուֆն ապստամբել էր խալիֆայի դեմ[60]: Քանի որ Հովհաննես Դրասխանակերտցին նկատի ունի ոչ թե 916-ին Յուսուֆի կողմից խալիֆային հարկ վճարելուց հրաժարվելը, այլ՝ 918 թ. Ռեյ քաղաքին տիրանալու համար նրա դեմ պատերազմ սկսելը[61], պնդելի է, որ Սահակ Սևադայի ապստամբությունը տեղի է ունեցել 918 թ.[62]:

---

[57] **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ** 1912, 311:

[58] **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ** 1912, 311–314:

[59] **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ** 1912, 314:

[60] **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ** 1912, 314:

[61] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն 1976, 43:

[62] Ա. Եղիազարյանը գտնելով, որ Սահակ Սևադայի ապստամբությունը տեղի է ունեցել Յուսուֆի ապստամբությունը պարտվելու և նրա ձերբակալվելու տարում, այն թվագրել է 919-ով (տե՛ս **Եղիազարյան** 2016, 64–65):

Ռ. Մաթևոսյանի կարծիքով, դրանից հետո Ուտի գավառում որոշ ժամանակ կառավարիչներ չեն եղել և այն ենթարկվել է անձամբ Աշոտ Ա-ին[63]: Սահակ Սևադայի ապստամբության ժամանակ այնտեղ վերակացուի մասին պատմիչի լռությունն իր հերթին հուշում է, որ նախքան այդ էլ այն անմիջապես արքունիքի կողմից է ղեկավարվել: Բոլոր դեպքերում, Աշոտն այդ վարչական միավորը պահում էր իր ուշադրության կենտրոնում: Այսպես, Վասակ Գնթունու կողմից Շամշուլդեն վրաց իշխան Գուրգենին պատկանող Կրուստ ամրոցի հետ փոխանակելը կանխելուց հետո նա գնում է Ուտի գավառ և «անդ ապա զնուաճեալսն ընդ ինքեամբ զաղխատրոյզն բանիւք համոզեալ, և եթէ ոք սիրէր զայտումն խորհրդոց ապիրատութեան՝ նշմարէր զայն. և որպէս սանձիւք ոմամբք բարեզգեաց բանիւք ի բաց ճնշեալ զխեցբեկագոյն բարս նոցա՝ ածէր ընդ ինքեամբ ի հաստատուն խորհուրդս»[64]: Դրանից հետո Աշոտը տեղացիներից զորք հավաքելով շարժվում է Կոտայք, ապա Հովհաննես Դրասխանակերտցու միջնորդությամբ Դվինում հաշտվելով Յուսուֆի կողմից Հայոց թագավոր ճանաչված հորեղբորորդու՝ Աշոտ Շապուհյանի հետ դառնում է «ի սիրեցեալն իւր յՈւտի գաւառ»[65]: Թե ինչով էր պայմանավորված այդ վարչական միավորի նկատմամբ Հայոց արքայի սերը և թե ինչու էր կրկին այնտեղ գնում, պատմիչը չի հայտնում: Այդուհանդերձ պարզ է, որ նա ձգտում էր այդ գավառում հաճախ լինելով հասնել նրա ըմբոստ բնակչության եթե ոչ բարյացակամությանը, ապա գոնե հավատարմությունը:

Եվ, իրոք, իրադարձությունների հետագա ընթացքը ցույց տվեց, որ Աշոտ Բ-ի մտահոգությունն արդարացված էր: Նա դեռ Ուտիի ճանապարհին էր, երբ լուր ստացավ, որ ուժի պատճառով Ցլիկ հորջորջված Ամրամը, որին «զնա իսկ էր կացուցեալ... հրամանատար ի վերայ գործոյ աշխարհին (Ուտիի – ***Ա.Շ.***)»[66], իր հնազանդությունից դուրս գալով «հաճէր հաւանէր մտանել ընդ լծով ծառայութեան անբնիկն Գուրգենայ, որ իշխան իշխանաց էր Գամրաց աշխարհին»[67]: Ն. Ադոնցն այս Գուրգենին նույնացրել է 921 թ. Դվինը պաշարած բյուզանդական բանակի հրամանատար, հնում Գամիրք կոչվող Կապադովկիայի ստրատեգոս Հովհաննես Կուրկուասի հետ: Դրանից ելնելով նա կարծել է, որ Հովհաննես Դրասխանակերտցին Ցլիկ Ամրամին վերագրելով

---

[63] Տե՛ս **Մաթևոսյան** 1982, 55:

[64] **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ** 1912, 318–319:

[65] **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ** 1912, 320:

[66] **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ** 1912, 320:

[67] **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ** 1912, 320–321:

վերջինիս իշխանության տակ անցնելու անհեթեթ գաղափարը, խեղաթյուրել է նրա մտադրությունը[68]: Այս հանգամանքը նկատած Ա. Եղիազարյանն էլ կարծել է, որ Գամրաց աշխարհի իշխանաց իշխանը վրաց իշխան Գուրգենն է՝ Աշոտ Բ-ի եղբայր Աբասի աները, Սամցխեում գտնվող Ղվել բերդի ու Աճարայի տերը[69]: Հարկ է նկատել, որ պատմիչի մատնանշած իշխանաց իշխան Գուրգենի հպատակության տակ մտնելը ենթադրում էր նրա տիրույթների և Ուտիի գավառի սահմանակցությունը: Մինչդեռ, թե Գամիրքը (Կապադովկիան) և թե Աճարան ու Սամցխեն, որտեղ գտնվում էր Ղվել բերդը, այդ վարչական միավորից հեռու էին:

Ցլիկ Ամրամի նշանակումն անկասկած տեղի էր ունեցել դրանից ոչ շատ առաջ: Ընդ որում, եթե Մովսեսն Ուտի գավառում «իշխան»-ի և «հրամանատար»-ի գործառույթներով էր օժտված, ապա նա՝ միայն «հրամանատար»-ի: Դա Ցլիկ Ամրամի իրավասությունների նվազեցում է ենթադրում թե ոչ՝ դժվար է ասել: Բայց ամեն պարագայում Ուտի գավառի վերակացությունը նրան էր վստահված:

Անկաշկանդ գործելու համար Ցլիկ Ամրամն «առձեռն պատրաստ զամրոցն Տաւըշոյ առեալ՝ ի նմա ամրապահեստ առնէր զընտանիս տան իւրոյ»[70]: Պատմիչի այս իրապատում վկայությունն արժեքավոր է երկու առումով: Այն նախ Տավուշ բերդի առաջին հիշատակությունն է հայ մատենագրության մեջ և ապա փաստում է, որ այն արքունապատկան էր և եղել է Ուտի գավառի վարչական կենտրոնը:

Աշոտ Բ-ի վիճակը բարդանում էր նրանով, որ Ուտիի ապստամբ վերակացուին էր հարել տեղի ամբողջ վերնախավը՝ «զբոլոր նախարարութիւն»-ը[71]: Այդ իսկ պատճառով, երբ նա հասնում է այնտեղ՝ «ոչ ոք այնուհետև գտաւ նմա օգնական՝ բայց ի սակաւուց ոմանց աննշանից»[72]: Եվ դա այն դեպքում, երբ նա, ինչպես արդեն տեսանք, դրանից քիչ առաջ տեղի բնակչությանն «ածէր ընդ ինքեամբ ի հաստատուն խորհուրդս»:

Ապստամբությունը ճնշելու համար Աշոտն անձամբ խնդրում է Եգերաց՝ Ափխազաց, թագավոր Կոստանդին III-ի (893–922) աջակցությունը և նրանից ստացած օգնական զորքով վերադառնում Ուտի: Սակայն Ցլիկ Ամրամը և,

---

[68] Տե՛ս **Ադոնց** 2012, 207:
[69] Տե՛ս **Եղիազարյան** 2016, 23, 71:
[70] **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ** 1912, 321:
[71] **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ** 1912, 321:
[72] **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ** 1912, 321:

պատմիչի խոսքերով ասած «ընդ նմա այլ ևս ապստամբ սրիկայքն»[73] Աշոտին մարտ տալու փոխարեն ծուղակ պատրաստելով՝ իրենց հավաքած զորքերով ամրանում են Տավուշ գավառի հյուսիսային սահման հանդիսացող Կուր գետի առափնյա ծառախիտ անտառում: Երբ Աշոտը զորքով մտնում է այնտեղ՝ «անխորհրդաբար անկանէր յանձուկ և ի նեղուց վայրս ամրոցի միոյ»[74]: Նրա ծուղակն ընկած զորքը շատ չանցած սկսում է նեղվել ջրի, պարենի ու ձիերի կերի պակասից: Զինվորները կապ են հաստատում ապստամբների հետ, որպեսզի հնարավորություն ստանան Հայոց արքային նրանց հանձնելու գնով անվնաս դուրս գալ պաշարումից: Այդ մասին իմանալով, Աշոտը մի գիշեր իր մերձավորների հետ սրընթաց ճեղքում է պաշարման օղակը և հեռանում Կաքավաքար ամրոց[75]:

Ցլիկ Ամրամի 921 թ. կայացած այս ապստամբության հետագա ընթացքի ու նրա ճակատագրի մասին պատմիչի լռության պատճառով ոչինչ հայտնի չէ: Այդուհանդերձ անվիճելի է, որ Ուտի գավառի վերակացուի ապստամբությունը ճնշվեց և նրան չհաջողվեց հասնել իր անջատողական նպատակի իրագործմանը:

Չնայած Հովհաննես Դրասխանակերտցու աշխատությանը ժամանակագրորեն հաջորդած աղբյուրներում Ուտի գավառ վարչական միավորի հետագա շրջանի պատմության մասին հաղորդումները բացակայում են՝ պնդելի է, որ այն մինչև 970-ական թվականների երկրորդ կեսը պահպանվել է: Ռ. Մաթևոսյանն առաջ է քաշել ու հետևողականորեն զարգացրել այն տեսակետը, որ Տաշիր-Ձորագետում կազմված երկու միավորները՝ «Ուտի» և «Տաշիր» գավառները X դ. 60-ական թվականներին, այն է՝ Աշոտ Գ-ի (953–977) օրոք միավորվեցին: Ստեղծվեց նոր խոշոր վարչական միավոր՝ «Տաշիր երկիր», որը բարձրաստիճան կառավարչի միջոցով ենթարկվեց անմիջականորեն արքունիքին[76]: Այս տեսակետը հիմնավորելու համար նա վկայակոչում է Սանահնի «Քէօթուկ»-ը (թերթ 48): Սակայն այնտեղ այդ գավառների միավորման մասին ոչինչ ասված չէ: Իրականում, ինչպես հստակ երևում է Աշոտ Գ-ի կրտսեր որդի Գուրգենին անցած տիրույթների մասին աղբյուրների հաղորդումներից, նա Շուլավերը կենտրոն ունեցող և Տաշիրն ու շրջակա գավառները ներառող վարչական միավորին էր կցել Ուտի գավառի միայն արևմտյան

[73] **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ** 1912, 322:
[74] **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ** 1912, 322:
[75] Տե՛ս **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ** 1912, 322–323:
[76] Տե՛ս **Մաթևոսյան** 1982, 58, **Մաթևոսյան** 1990, 153 և այլն:

հատվածը՝ Ձորոփորը, Կայան և Կայծոն բերդերով հանդերձ[77]: Այդ կերպ սկիզբ դրվեց Տաշիր-Ձորագետի Կյուրիկյան թագավորության կազմավորման գործընթացին, որն իր տրամաբանական ավարտին հասավ 981 թ.[78]: Ինչ վերաբերում է Աղուէ և Տավուշ գավառներին, ապա դրանք շարունակեցին մնալ արքունի ոստանի կազմում՝ Սմբատ Բ-ի (977–990) անմիջական ենթակայության տակ: Այսպիսով, իր ժամանակի Հայաստանի քաղաքական կյանքին զգալի մասնակցություն ունեցած Ուտի գավառ կոչված վարչական միավորն Աշոտ Գ-ի օրոք սկսված վարչական վերափոխումների հետևանքով վերացվելով՝ պատմական ասպարեզից հեռացավ:

Եզրակացություն

Ուտի գավառն ընդգրկել է Գուգարքի Ձորոփոր և Ուտիքի Աղուէ ու Տավուշ արքունապատկան գավառները: Այն եղել է ոչ թե ֆիզիկաաշխարհագրական, այլ վարչական միավոր: Կենտրոնը եղել է Տավուշ բերդը: Ստեղծվել է Աշոտ Բ-ի կողմից, որը նպատակ է ունեցել դրա նշանակովի կառավարչի միջոցով ապահովել այդ գավառների ըմբոստ բնակչության հնազանդությունը և երկրի սահմանների մի հատվածի հուսալի պաշտպանությունը: Սակայն առաջին հերթին երկրում ավատատիրական հարաբերությունների խորացման հետևանքով Ուտի գավառի կառավարիչները (Մովսես, Ցլիկ Ամրամ) տեղական վերնախավի աջակցությամբ մեկը մյուսի հետևից ապստամբում էին Աշոտի դեմ՝ ձգտելով ազատվել նրա ենթակայությունից: Աշոտ Գ-ի օրոք սկսված վարչական վերափոխումների հետևանքով Ուտի գավառը վերացվեց:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ադոնց Ն. 2012, Երկեր, հ. Ե, Երևան, ԵՊՀ հրատ., 656 էջ:

Գևորգյան Տ. 2013, Հայոց Արևելից կողմերը ըստ «Աշխարհացոյց»-ի, ատենախոսություն Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Երևան, անտիպ, 159 էջ:

Եղիազարյան Ա. 2011, Հայ Բագրատունիների տերությունը (885–908 թթ.), Երևան, ԵՊՀ հրատ., 392 էջ:

Եղիազարյան Ա. 2016, Աշոտ Երկաթ. թագավոր Հայոց, Երևան, ԵՊՀ հրատ., 117 էջ:

---

[77] Տե՛ս **Յիշատակարան Սանահնոյ վանից** 2007, 67: **Վարդանայ վարդապետի** 1862, 90:

[78] Տե՛ս **Շահնազարյան** 2002, 224–225:

Եղիազարյան Ա. 2017, Աբաս Բագրատունի թագավոր Հայոց, Երևան, ԵՊՀ հրատ., 121 էջ:

Հայ ժողովրդի պատմություն 1976, հ. III, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1023 էջ:

Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ, ի Վենետիկ, ի Սուրբ Ղազար, 1862, 184 էջ:

Հարությունյան Բ. 2007, Հայոց Արևելից կողմերի վարչական բաժանումն ըստ «Աշխարհացոյց»-ի, Շուշին Հայոց քաղաքակրթության օրրան. Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 370 էջ:

Մաթևոսյան Ռ. 1982, Տաշիր-Ձորագետ (X դ. վերջ – XII դ. սկիզբ), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 156 էջ:

Մաթևոսյան Ռ. 1990, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 295 էջ:

Մանր ժամանակագրություններ, XIII–XVIII դդ., հ. I, 1951, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 455 էջ:

Մովսէս Կաղանկատուացի 1983, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Քննական բնագիրը և ներածությունը Վարագ Առաքելյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 384 էջ:

Յակոբեան Ալ. 2010, Բուն Աղուանքի եւ Հայոց արևելից կողմանց թագաւորութիւնները Թ-Ժ դարերում (աղբիւրագիտական դիտարկումներ), Հանդէս ամսօրեայ, թիվ 1–12, Վիեննա-Երեւան, Մխիթարեան հրատարակչատուն, սն. 67–119:

Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահնի Քէօթուկը) 2007, Աշխատասիրութեամբ Պ. Մուրադեանի, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատ., 331 էջ:

Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ պատմութիւն Հայոց, Թիֆլիս, Էլեքտրատպ. օր. Ն. Աղանեանցի, պօլից. 7, 1912, 427 էջ:

Շահնազարյան Ա. 2009, Տաշիր-Ձորագետի Կյուրիկյան թագավորության առաջացումն ու հզորացումը, Պատմա-բանասիրական հանդես, № 2–3, Երևան, էջ 224–225:

Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, Ն. Աղանեանցի տպ., 1910, 619 էջ:

Ստեփանոս Տարոնեցի 2010 Պատմութիւն Տիեզերական, Մատենագիրք Հայոց, ԺԵ, Անթիլիաս-Լիբանան, ԵՊՀ հրատ. 894 էջ:

Ուլուբաբյան Բ., 1975, Խաչենի իշխանությունը X-XVII դարերում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 455 էջ:

ГАВАР УТИ

ШАХНАЗАРЯН А.

Резюме

Ключевые слова: административная единица, Тавуш, Дзоропор, Гардман, бунт, Багратидская Армения, гавар Ути.

В своем труде Ованес Драсханакертци часто упоминает гавар Ути в качестве названия административной единицы, в которую входили Гугаркский гавар Дзоропор и Утикские гавары Агуэ и Тавуш. Гавар Ути был основан царем Ашотом II с целью усмирения местного мятежного населения и защиты границ страны с помощью управляющего, непосредственно подчинявшегося царю. Но управляющие этой административной единицей часто проявляли неповиновение, не желая подчиняться царю. Как административная единица гавар Ути перестал существовать в результате реформ, предпринятых Ашотом III.

UTI REGION

SHAHNAZARYAN A.

Summary

Key words: administrative unit, Tavush, Dzoropor, Gardman, rebellion, Bagratuni Armnenia, Uti region.

In his work Hovhannes of Draskhanakert often mentions the name of Uti region as a denomination of an administrative unit, consisting of Dzoropor, Gugarq, Aghue and Tavush provinces. Uti region was founded by King Ashot II, who aimed to secure the obedience of the rebellious inhabitants and to protect the borders with the help of an administrator who directly obeyed the king. However, the administrators of that administrative unit often revolted, trying to be freed from the king's rule. After the King Ashot III's administrative reforms Uti region ceased to exist.